ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թվականի սեպտեմբերի 6-ին տեղի ունեցավ 22 Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Արուսյակ Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը կազմակերպելու հարցը:
4. Ընթացիկ հարցեր/ կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1. Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:
Ելույթ ունեցավ դասղեկ Արուսյակ Դավթյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը:
Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով:
Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն.
1. Հովհաննիսյան Սուսաննա
2. Աբելյան Լուսինե
3. Մկրտչյան Թագուհի
4. Գինոսյան Գոհար
5. Հարությունյան Հասմիկ

Նախագահի թեկնածու առաջադրվեց Հարությունյան Հասմիկը, որից հետո կատարվեց քվեարկություն: 5 կողմ, 0 դեմ ձայնով Հարությունյան Հասմիկը ընտրվեց նախագահ:

Որոշեցին.
11Բ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝
1. Հարությունյան Հասմիկ /նախագահ/
2. Հովհաննիսյան Սուսաննա /անդամ/
3. Մկրտչյան Թագուհի/անդամ/
4. Գինոսյան Գոհար/անդամ/
5. Աբելյան Լուսինե /անդամ/

2.Լսեցին.<<Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը>>:

Դասղեկ Արուսյակ Դավթյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:
Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ ուսուցիչներին պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել կրթության գործընթացը նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ տետրեր /թեմատիկ,աշխատանքային, /գրենական պիտույքներ, ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները/:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր /աշխատանքային և թեմատիկ/, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձ ավճարների հավաքագրումը:

3.Լսեցին.- Սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը, ժամանցը կազմակերպելու հարցը:

Դասղեկը ներկայացրեց, որ բոլոր դասարաններում էլ կան սոցիալապես անապահով և երեխաներ, որոնց դպրոցի,համայնքապետարանի կողմից դասագրքերի, հագուստի համար օգնություն հաճախ տրամադրվում է: Սակայն ուսումնաօժանդակ նյութերի ձեռքբերման, էքսկուրսիաներ, թանգարան, թատրոն այցելությունների ժամանակ անհրաժեշտ է ապահովել նման երեխաների ներկայությունը:

Դա շատ կարևոր է նման ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը կոլեկտիվին, ընկերների հետ շփումները ապահովելու և նրանց նորմալ հոգեբանական զարգացումը ապահովելու համար:Որոշակի գումարային ներդրումներով ավելի ապահով վիճակում գտնվող ծնողները կարող են իրենց երեխաների մոտ ապահովել հասակակիցների նկատմամբ ճիշտ, մարդկային հարաբերությունների ձևավորումը, հատկապես, որ դա ծնողական խորհրդի կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակում է գտնվում:

Որոշեցին.

Տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների ժամանակ անհրաժեշտ օգնություն ցուցաբերել անապահով ընտանիքի երեխաներին:

4. Լսեցին.- Ընթացիկ հարցեր / կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ Ար.Դավթյանը նշեց, որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով : Դասերը սկսվելու են 9:00-ին, ավարտվելու են 15:00ին: Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով, դպրոցական համազգեստով: Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում: Պահել ծնող-դասղեկ-
աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Հասմիկ Հարությունյան/
Քարտուղար՝ /Լուսինե Աբելյան /